

նուաժ էր երկու սատրապութեանց: Թող-
լով անոնց արեւելեանը (ԺԸ սատրապու-
թիւն), ուր կը բնակէին Ալարոդիք եւ
Սասպիրք՝ մինչեւ Կողքիս (Հերոդ. Գ. 94,
Դ, 37 եւն), ուստի մինչեւ արդի Բա-
թումի մօտերը, այն ժամանակի արեւմտեան
Հայաստանը (ԺԳ Սատրապութիւն կամ
Հարկաց Շրջան) «Հայոց եւ դրացեաց» կը
հասնէր «Μέχρι- Ὑπερ- Θού» (μέχρι τοῦ
πόντου τοῦ Εὐξείνου. Հերոդ. Գ, 93): Այս
ծովիզերքը Տրապիզոնէ արեւելք ըլլալու
էր. որովհետեւ անկէ արեւմուտք ուրոյն
Շրջան մըն էր (ԺԹ) պոնտական մանր
ազգերու՝ Մոսքացւոց, Տիբարենացւոց եւն:
Քսենոփոնի ատեն ալ կրկին էին Հայաս-
տանները, երբ կը նկարագրէ ԅունաց Բիւ-
րուն նահանջն այս երկրին մէջէն հարաւէն
դէպ ի հիւսիս, հասնելու համար Պոնտա-
կան լեռներն ու Տրապիզոն (Քսենոփոն,
Արշաւ. կամ Anabasis, IV, 3 ff.): Այս
առթիւ կիմանանք թէ Հայաստանի այս
հիւսիսային սահմաններէն մաս մ'ապստամբ
էր, յատկապէս Խաղափ+ (Χαλδαῖοι) եւ
Տայ+ (Τάοχοι, հայերէն -+ յոգնակերտով,
հմմտ. Քսեն. Ե, 5 եւն): Միւս կողմանէ
Հայաստան ինչպէս մինչեւ Եփրատ, անկէ